ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՍՆՏԶ ԼՖ Ծրագրի Բաղադրիչ 2-ի Մասնակցության Ուղեցույց

Երևան 2021

Բովանդակության ցանկ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 3

1. ՄՆՏՋ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ 4

2. ՄՆՏՋ ԾՐԱԳԻՐԸ ԱՋԱԿՑՈՒՄ Է 4

3. ՄՆՏՋ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ 4

4. ԲԱՂԱԴՐԻՉ 2. ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 5

5. ՈՎՔԵ՞Ր ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ 5

6. ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵԼ 5

7. Ի՞ՆՉ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՀՊԱՆԵԼ 5

8. ՄՆՏՋ ԲԱՂԱԴՐԻՉ 2-Ի ԵՆԹԱԾՐԱԳՐԻ ՑԻԿԼԸ 6

9. (ՄԻՋ-) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ՍՏԵՂԾՈՒՄ 8

10. ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ՝ 8

11. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ 8

12. ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ և ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ 9

13. ԵՆԹԱԾՐԱԳՐԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎ 9

14. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՐՇԱՎ, ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ և ԵՆԹԱԾՐԱԳՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎ 10

15. ԱՌԱՋԱՐԿԻ ՁևԱՎՈՐՈՒՄ և ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՀՏՋՀ-ԻՆ 11

16. ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ 11

17. ԵՆԹԱԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ 11

18. ԵՆԹԱԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ՝ ԲԱՑԱՌՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ 12

19. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ, ԺՈՂՈՎՆԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ և ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԺՈՂՈՎ 12

20. ՓԱԽ-Ի ԿՈՂՄԻՑ ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ և ԴԱՍԱԿԱՐԳՎԱԾ ՑՈՒՑԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ 13

21. ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ ԸՆՏՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՀԵՏ (ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ ՏԵԽՆԻԿԱՅԻ և ՄԵՔԵՆԱ-ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ) 13

22. ՀՏՋՀ-Ի ԿՈՂՄԻՑ ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ (ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ ՏԵԽՆԻԿԱՅԻ և ՄԵՔԵՆԱ-ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ) 13

23. ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԺՈՂՈՎ 13

24. ԵՆԹԱԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ և ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 14

25. ՄՆՏՋ ԾՐԱԳՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ 14

ՀՏՋՀ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ 15

Հապավումների ցանկ

ԳԿ	Գործադիր կոմիտե
ԾԻԿ	Ծրագիրը իրականացնող կոմիտե
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ ՏԿԵՆ	Հայաստանի հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՆԽ	Նախաձեռնող խումբ
ՍՆՏԶ ԼՖ	Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում

1. ՍՆՏՋ ծրագրի հիմնական նպատակը

ՍՆՏՋ ԼՖ Ծրագրի զարգացման նպատակը համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքի որակի և մատչելիության բարելավումն է:

2. ՍՆՏՋ ծրագիրը աջակցում է

- համայնքային ենթակառուցվածքների վերականգնմանը և ծառայությունների որակի ու մատչելիության բարելավմանը՝ ի պատասխան ի հայտ եկող կարիքների,
- տեղական սոցիալական, ինստիտուցիոնալ և տնտեսական զարգացումը խթանելուն՝ հիմնվելով բարելավված ծառայությունների մատուցման և միջհամայնքային պլանավորման և համատեղ զարգացման ծրագրերի իրականացման նպատակով համագործակցության վրա,
- տեղական սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների վերականգնմանը, միջհամայնքային համագործակցության, պլանավորման և տեղական տնտեսական, սոցիալական և ինստիտուցիոնալ զարգացման խթանմանն ուղղված ենթածրագրերի մշակմանը և իրականացմանը,
- համայնքային մակարդակում ինստիտուցիոնալ կարողությունների հզորացմանը՝ միտված ՀՏՋՀ և տեղական դերակատարների հետ համագործակցությանը, համայնքային ներդրումների և ծառայությունների մատուցման որակի բարելավմանը և կայունությանը, ինչպես նաև հաշվետվողականության բարձրացմանը և շահագրգիռ կողմերի հնարավորությունների ընդլայնմանը:

3. ՍՆՏՋ ծրագրի բաղադրիչները

Բաղադրիչ 1. Օժանդակություն սոցիալ-տնտեսական զարգացմանը և կարողությունների զարգացմանը տեղական մակարդակում

Բաղադրիչ 2. Օժանդակություն միջհամայնքային սոցիալ-տնտեսական զարգացումների նախաձեռնություններին

4. Բաղադրիչ 2. Միջհամայնքային սոցիալական և տնտեսական զարգացման նախաձեռնությունների աջակցություն

ՍՆՏՋ ծրագրի երկրորդ բաղադրիչի շրջանակներում ֆինանսավորվող ենթածրագրերը միտված են միավորված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը:

5. Ովքե՞ր կարող են դիմել

Միավորված համայնքները կամ համայնքների միությունները:

6. Ինչպե՞ս դիմել

Ընթացակարգին համաձայն մշակել ծրագրային առաջարկ և ուղարկել ՀՏՋՀ:

7. Ի՞նչ սկզբունքներ է անհրաժեշտ պահպանել

- **Ենթածրագիրը պետք է վերաբերի բազմաբնակավայր համայնքի բոլոր բնակավայրերին**
- **Ծրագրի մասնկցային ձևավորում**
- **Համայնքի բնակիչներին ծրագրի վերաբերյալ իրազեկում**
- **Ենթածրագրի նախաձեռնող խմբին անդամակցության հնարավորությունների ձևավորում**

8. ՍՆՏՋ բաղադրիչ 2-ի ենթածրագրի ցիկլը

1. Ծրագրի մեկնարկի ազդարարում

2.Տեղեկատվական 2 սեմինար յուրաքանչյուր մարզում

- Հասարակական կազմակերպությունների և ձեռներեցների համար
- ՏԻՄ-երի ներկայացուցիչների համար

3. Համայնքի բնակիչների շրջանում ծրագրային գաղափարների հավաքագրում

4. (միջ-) համայնքային նախաձեռնող խմբերի ստեղծում

5. ա. նախաձեռնող խմբերի անդամների ուսուցում և խորհրդատվություն
բ. ենթածրագրի գաղափարների ընտրության ժողով

6. Տեղեկատվական արշավ, հանրային քննարկումներ բնակավայրերում և ենթածրագրի ընտրության ժողով

7. Առաջարկի ձևավորում և ներկայացում ՀՏՋՀ-ին

8. Առաջարկի քննում ըստ բացառող չափանիշների և դրանց համապատասխանող առաջարկների մերժում

9. Ենթածրագրերի առաջարկների փորձաքննության առաջին փուլ ՀՏՋՀ-ի մասնագետների կողմից

10. Համայնքի իրազեկում, ժողովներ բնակավայրերում և առաջին ընդհանուր համայնքային ժողով

11. ՓԱԽ-ի կողմից ենթածրագրերի գնահատում՝ ըստ գնահատման որակական չափանիշների և դասակարգված ցուցակի պատրաստում

12. Ենթածրագրերի առաջարկների նախնական ընտրություն ԳԿ-ի կողմից ՓԱԽ-ի դասակարգման հիման վրա

13. Նախնական համաձայնագրի կնքում ընտրված համայնքների լիազոր մարմնի հետ (կիրառելի չէ տեխնիկայի և մեքենա-սարքավորումների ձեռքբերման պարագայում)

14. Հատուկ մասնագիտական օժանդակություն՝ առաջարկները ներկայացրած նախաձեռնող խմբերի ներկայացուցիչների համար

15. ՀՏՋՀ-ի կողմից ենթածրագրերի վերջնականացված առաջարկների փորձաքննության երկրորդ փուլ (կիրառելի չէ տեխնիկայի և մեքենա-սարքավորումների ձեռքբերման պարագայում)

16. Ենթածրագրերի առաջարկների վերջնական հաստատում ԳԿ-ի կողմից, համայնքների իրազեկում ենթածրագրի վերջնական առաջարկի մասին և համայնքի երկրորդ ընդհանուր համայնքային ժողով (կիրառելի չէ տեխնիկայի և մեքենա-սարքավորումների ձեռքբերման պարագայում)

17. Ենթածրագրերի վերջնականացված առաջարկի ներկայացում ՀՏՋՀ-ի Խորհրդին տեղեկատվության նպատակով կամ հաստատման համար և անհրաժեշտության դեպքում՝ ՀԲ-ի հաստատմանը

18. Հիմնական համաձայնագրի կնքում ընտրված համայնքների լիազոր մարմնի

հետ
19. Համայնքի կողմից ներդրման ստացում
20. Մատակարարների և կապալառուների վարձում, խորհրդատուների ընտրություն
21. Պայմանագրերի կնքում
22. Ենթածրագրի/բաղադրիչների սկիզբ և իրականացում,աշխատանքների վերահսկում
23. Ենթածրագրի/բաղադրիչների ավարտ և հանձնում

9. (Միջ-) համայնքային նախաձեռնող խմբի ստեղծում

Մարզային տեղեկատվական սեմինարից հետո համայնքում ձևավորվում է նախաձեռնող խումբ, որը պատասխանատու է ծրագրային հայտի և առաջարկի ձևավորման համար:

Համայնքի հայտարարությունների տախտակներին և սոցիալական կայքի էջում անհրաժեշտ է տեղադրել Նախաձեռնող խմբին անդամակցության հնարավորության վերաբերյալ հայտարարություն:

10. Նախաձեռնող խմբի կազմը՝

- ✓ խոշորացված համայնքի ղեկավար, *(պարտադիր)*
- ✓ յուրաքանչյուր բնակավայրի վարչական ղեկավար, *(պարտադիր)*
- ✓ ավագանու անդամներ,
- ✓ համայնքների տնտեսական զարգացման գծով պատասխատատու, *(պարտադիր)*
- ✓ բազմաֆունկցիոնալ կոմունալ ձեռնարկության (ՀՈԱԿ/Կոոպերատիվ/կոմունալ բաժին) ղեկավար, *(պարտադիր)*
- ✓ սոցիալական աշխատող/մասնագետ
- ✓ ակտիվ երիտասարդ խմբի ներկայացուցիչ, *(պարտադիր)*
- ✓ տեղական ՀԿ-ների ներկայացուցիչներ,
- ✓ փորձագետներ և համապատասխան ոլորտային մասնագետներ,
- ✓ տեղական բիզնեսի ներկայացուցիչներ,
- ✓ շահառու համայնքի բնակիչներ,
- ✓ այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներ (տեղական և միջազգային):

11. Համայնքի բնակիչների շրջանում ծրագրային գաղափարների հավաքագրում

Ենթածրագրի հայտի ձևավորման ընթացքին համայնքի բնակիչների մասնակցությունը ապահովելու և ենթածրագիրը համայնքային կարիքների տեսանկյունից առավել թիրախային դարձնելու նպատակով համայնքապետարանը բնակիչների շրջանում նախաձեռնում է հարցում, որի միջոցով իրականացվում է ծրագրային գաղափարների հավաքագրում ՝համայնքի բնակիչների շրջանում (ներառելով նաև տեղական գործարարներին և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին):

ՆԽ-ից ընտրվում է համայնքի բնակիչների շրջանում ծրագրային գաղափարների հավաքագրման համար պատասխանատու: Գաղափարների հավաքագրումը իրականացվում է ՀՏՋՀ-ի կողմից մշակված ուղեցույցին համապատասխան: Նախընտրելի է, որպեսզի ընտրված պատասխանատուն տիրապետի սոցիալական հետազոտությունների

իրականացման ընթացակարգերին և սոցիոլոգիական հարցումների իրականացման հմտություններին[1]:

12. Նախաձեռնող խմբերի անդամների ուսուցում և խորհրդատվություն

Նախաձեռնող խմբի և ձևավորված աշխատանքային խմբի անդամների համար ՀՏՋՀ-ի կողմից կազմակերպվում է ուսուցում հետևյալ թեմաներով.

- Ծրագրի Բաղադրիչ 2-ի մոտեցումները, ընթացակարգերը և պահանջները,
- տեղական պլանավորման հիմնական սկզբունքները,
- ծրագրերի կառավարման հիմունքները,
- ՀՏՋՀ-ի կողմից իրականացվող շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական երաշխիքային քաղաքականությունը,
- դիմորդ համայնքների բնակչության մասնակցությունը ենթածրագրի ընտրությանը, նախապատրաստ-մանը և իրականացմանը,
- վերականգնված / կառուցված օբյեկտների շահագործումը և պահպանումը, ենթածրագրերի և/կամ դրանց բաղադրիչների ավարտից հետո համապատասխան ծառայությունների շարունակականության ապահովումը:

Ուսուցման ընթացքում կազմակերպվում են գործնական վարժություններ և համայնքների հիմնախնդիրների քննարկում: ՆԽ-ի առաջին հանդիպմանը, որի ժամանակ իրականացվում է համայնքի գերակա խնդիրների վերհանում և քննարկում, մասնակցում է նաև ՀՏՋՀ աշխատակիցը: Անհրաժեշտ է ապահովել բոլոր անդամների մասնակցությունը ՆԽ-ի քննարկումներին:

13. Ենթածրագրի գաղափարների ընտրության ժողով

- **Ենթածրագրի գաղափարների ընտրության ժողովի անցկացման օրվանից 10 օր առաջ համայնքի հայտարարությունների տախտակին, կայք էջում և սոցիալական կայքի էջում տեղադրել ժողովի իրականացման հայտարարություն**
  - Հայտարարության մեջ նշել հետադարձ կապի կոնտակտներ, որոնց միջոցով համայնքի բնակիչը կամ այլ շահագրգիռ կողմ կկարողանա ուղարկել իր առաջարկությունը
  - Հայտարարության մեջ նշել ժողովին մասնակցության կարևորության և ժողովի ժամանակ տեսակետի պաշտպանության անհրաժեշտության մասին
- **Սոցիալական ցանցի էջում տեղադրել ՍՆՏՋ ծրագրի իրազեկող տեսանյութը և ուղեցույցը**

[1] Որպես ծրագրային գաղափարների հավաքագրման պատասխանատու կարող է ընտրվել համայնքի սոցիալական աշխատողը, հասարակական կազմակերպության կամ երիտասարդական խմբի ներկայացուցիչը:

- **Ժողովից երկու օր առաջ ամփոփել հեռախոսազանգերի, էլ նամակների և սոցիալական կայքի հաղորդագրությունների և քվերարկության միջոցով ստացված առաջարկությունները**

- **Ժողովից 10 օր առաջ համայնքի հայտարարությունների տախտակին, կայք էջում և սոցիալական կայքի էջում տեղադրել ծրագիրը իրականացնող կոմիտեին անդամակցության հնարավորության վերաբերյալ հայտարարություն**

- **Ժողովի ժամանակ քննարկել բոլոր առաջարկությունները**

- **Ամփոփել ստացված գաղափարները**

- **Ժողովը հեռարձակել առցանց կամ արդյունքները ամփոփ ներկայացնել սոցիալական կայքում**

14. Տեղեկատվական արշավ, հանրային քննարկումներ բնակավայրերում և ենթածրագրի ընտրության ժողով

Բնակավայրերում կազմակերպվում են հանրային քննարկումներ՝ համայնքների ֆորմալ և ոչ ֆորմալ ղեկավարների, համայնքում գործող կազմակերպությունների, դպրոցների և այլ հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների, խոցելի խմբերի, հասարակական կազմակերպությունների, բիզնեսի ներկայացուցիչների և այլոց մասնակցությամբ: Այս քննարկումների նպատակն է՝ համայնքի բոլոր խմբերին ևս մեկ անգամ իրազեկել ՍՆՏՋ ԼՖ Ծրագրի վերաբերյալ, քննարկել և հաստատել ենթածրագրի կամ համայնքի հետ կապված բաղադրիչի առաջնայնությունը և սպասվող արդյունքները և հանրային քնարկման որոշումով հաստատել (կամ մերժել) այն, բնակչության հետ քննարկումների արդյունքում համայնքի ներդրման մասին որոշում ընդունել:

Քարոզարշավի վերջում նախաձեռնող խումբը համայնքում կազմակերպում է ենթածրագրի ընտրության ժողով, որի ժամանակ ՆԽ-ն քննարկման է դնում ձևավորված ենթածրագրի առաջարկը: Այս միջոցառմանը մասնակցում են ՆԽ-ի անդամները, ՀՏՋՀ-ի աշխատակիցները, ՏԻՄ-ի ներկայացուցիչները, հասարակական կազմակերպությունները և ձեռներեցները, համայնքի բնակիչները:

Անհրաժեշտ է՝

- **Ժողովի հայտարարության տարածում բոլոր հնարավոր միջոցներով**

- **Արձանագրություն՝ կից լուսանկարներով և մասնակիցների ցանկով**

15. Առաջարկի ձևավորում և ներկայացում ՀՏՋՀ-ին

Ծրագրի նախնական առաջարկները ՀՏՋՀ-ին անհրաժեշտ է ներկայացնել մինչև սահմանված վերջնաժամկետը: Նախաձեռնող խմբերի կողմից ներկայացված նախնական առաջարկների փաթեթները փոխանցվում են ՀՏՋՀ Գործադիր կոմիտեին:

16. Ընդունելիության չափանիշներ

ա) դիմող խոշորացված համայնքը կամ համայնքների խումբը իրավունակ է, և նախաձեռնող խումբը ստեղծված է ըստ ՀՏՋՀ-ի կանոնակարգի,

բ) դիմող համայնքների խումբը/միավորված համայնքը ներառում է առնվազն մեկ համայնք խիստ խոցելի կամ խոցելի Ա և Բ խմբերից,

գ) առաջարկը պատշաճ կերպով կազմված և ստորագրված է, պահանջվող փաստաթղթերը կցված են,

դ) առաջարկում ներկայացված խնդիրը համապատասխանում է ՍՆՏՋ ԼՖ Ծրագրի ենթածրագրերի / բաղադրիչների տեսականուն:

Վերոհիշյալ ընդունելիության չափանիշներին չհամապատասխանելու դեպքում առաջարկը մերժվում է:

17. Ենթածրագրի առաջարկների նախնական փորձաքննություն

Փորձաքննության նպատակն է ուսումնասիրել ստացված առաջարկները, դասակարգել դրանք համաձայն ՀՏՋՀ-ի Բաղադրիչ 2-ի գնահատման չափանիշների, ընտրել առավել բարձր գնահատական ստացած առաջարկները և նախաձեռնող խմբերի հետ համատեղ նախապատրաստել ենթածրագրերի իրականացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը (մասնավորապես՝ բաղադրիչների ճարտարապետական / ինժեներական նախագծերը և ծախսերի նախահաշիվները, ՀՀ օրենսդրությամբ և ՀՏՋՀ-ի կանոնակարգով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը և այլն), օժանդակել նախաձեռնող խմբերին վերջնականացնել ենթածրագրերի առաջարկները և իրականացնել դրանց վերջնական գնահատումը:

Անհրաժեշտության դեպքում կազմակերպվում է այցելություն տեղանք՝ փորձաքննող ինժեների, շրջակա միջավայրի և սոցիալական մասնագետի կողմից:

18. Ենթածրագրի առաջարկի գնահատման՝ բացառող չափանիշներ

- Մասնակից համայնքներն ունեն համանման, համայնքի կարիքներին բավարարող և պատշաճ վիճակում գտնվող ենթակառուցվածքներ կամ ծառայություններ, որոնք ընդգրկված են ենթածրագրում
- ֆինանսավորվող բաղադրիչների թիրախային օբյեկտները տեսանելի ապագայում ենթակա են կրճատման կամ կառուցվածքային փոփոխության,
- ՍՆՏՋ ԼՖ-ի միջոցներով ֆինանսավորվող բաղադրիչների միջոցով լուծվող խնդիրը կրկնում է համայնքում այլ կազմակերպությունների, այն է՝ կառավարության, ՈԿԿ-ների և այլոց կողմից օժանդակված համանման ծրագրերը, բայց կարող է լրացնել դրանք,
- առաջարկում ներկայացված խնդիրները չունեն բավարար տեխնիկական լուծումներ,
- բաղադրիչներից որևէ մեկն ունի էական բացասական սոցիալական կամ բնապահպանական ազդեցություն/ներ, որոնք անդառնալի, աննախադեպ կամ տարատեսակ բնույթ ունեն,
- համայնքներում պատշաճ կերպով իրականացվում է աղբահանություն, և/կամ համայնքների տարածքի աղբից մաքրման և աղբի կառավարման հետ կապված բաղադրիչը ներառված է ենթածրագրի առաջարկի մեջ,
- առաջարկվող ենթածրագրի իրականացումը հանգեցնում է ջրի աղտոտմանը և / կամ ազդում է միջազգային ջրուղիների որակի վրա,
- Եթե անհրաժեշտ է ժամանակավոր հողի օգտագործում՝ ժամանակավոր կառույցների պահեստավորման կամ ենթածրագրի վայր ժամանակավոր հասանելիության համար, առկա չի հողի սեփականատիրոջ կողմից գրավոր ապացույց (թույլտվության նամակ կամ երկկողմանի ստորագրված համաձայնագիր), որով թույլատրվում է հողի օգտագործումը որպես շինարարության վայր կամ շինարարության վայր հասանելիության ուղի:
- Առկա չեն տեղական և տարածաշրջանային լիազորված մարմինների կողմից ՀՀ գործող օրենսդրության համաձայն գրավոր լիազորագրերը և թույլատվությունները,
- Եթե որևէ համայնքում նախկինում ՀՍՆՀ/ՀՏՋՀ-ի կողմից իրականացվել է որևէ միկրո-/ենթածրագիր, և վերականգնված օբյեկտը չի շահագործվում ըստ նպատակի:
- Առաջարկվող ծրագիրը չունի կենսունակ շահագործման պլան
- Տնտեսական զարգացման ուղղված բաղադրիչի ծախսեր-օգուտներ վերլուծության ցուցանիշը հավասար կամ փոքր է մեկից (գնահատվում է միայն այն ենթածրագրերի այն բաղադրիչների համար, որոնք ուղղված են տնտեսական զարգացմանը, իսկ ծախսեր-օգուտներ վերլուծությունը կիրականացվի միայն տնտեսական զարգացման ուղղված բաղադրիչի համար):

19. Համայնքի իրազեկում, ժողովներ բնակավայրերում և առաջին ընդհանուր համայնքային ժողով

- **Ժողովի հայտարարության (փորձաքննության ամփոփ արդյունքներով) տարածում բոլոր հնարավոր միջոցներով՝ հայատարարությունների տախտակներին, սոցիալական կայքի էջում, վեբ-կայքում, էլ. նամակներով, հեռախոսազանգերի միջոցով:**

- **Արձանագրություն՝ կից լուսանկարներով և մասնակիցների ցանկով**

- **Ժողովների արդյունքների ամփոփ ներկայացում սոցիալական ցանցում**

20. ՓԱԽ-ի կողմից ենթածրագրերի գնահատում՝ ըստ գնահատման որակական չափանիշների և դասակարգված ցուցակի պատրաստում

Փորձագիտական աշխատանքային խմբի կազմում ընգրկված են այն կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք ներգրավված են տեղական ինքնակառավարման և սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում: Փորձագիտական աշխատանքային խումբը ստեղծվում է ՀՀ ՏԿԵ նախարարության նախաձեռնությամբ: Փորձագիտական աշխատանքային խմբի կազմում ներգրավվում են 9-10 փորձագետներ: Յուրաքանչյուր ենթածրագրի առաջարկի համար աշխատանքային խմբի անդամների գնահատականների հիման վրա հաշվարկվում է այդ ենթածրագրի միջին գնահատականը: Միջին գնահատականների հիման վրա ՓԱԽ-ի կողմից կազմվում է ենթածրագրերի առաջարկների դասակարգված ցուցակ:

21. Նախնական համաձայնագրի կնքում ընտրված համայնքների լիազոր մարմնի հետ (կիրառելի չէ տեխնիկայի և մեքենա-սարքավորումների ձեռքբերման պարագայում)

Այս փուլում ՆԽ-ի և ՀՏՋՀ-ի միջև կնքվում է նախնական համաձայնագիր: Մասնավորապես, նախնական համաձայնագրում սահմանվում է համայնքային ներդրման առաջին մասնաբաժինը, որը, որպես կանոն, կազմում է համայնքային ամբողջ ներդրման 50%-ը:

22. ՀՏՋՀ-ի կողմից ենթածրագրերի վերջնականացված առաջարկների փորձաքննության երկրորդ փուլ (կիրառելի չէ տեխնիկայի և մեքենա-սարքավորումների ձեռքբերման պարագայում)

Վերջնական փորձաքննության ընթացքում իրականացվում է նախագծային փաստաթղթերի և ծախսերի դիտարկում և հաստատում, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի մշակում: Հիմք ընդունելով քննարկված, ճշտված և հաստատված նախագծերը, ինչպես նաև փորձաքննության առաջին և երկրորդ փուլերի արդյունքները, փորձաքննող ինժեները կազմում է ծրագրի վերջնական փորձաքննության հաշվետվությունը

23. Երկրորդ ընդհանուր համայնքային ժողով

- **Ժողովի հայտարարության (փորձաքննության ամփոփ արդյունքներով) տարածում բոլոր հնարավոր միջոցներով**
- **Արձանագրություն՝ կից լուսանկարներով և մասնակիցների ցանկով**
- **Ժողովների արդյունքների ամփոփ ներկայացում սոցիալական ցանցում**

24. Ենթածրագրի վերջնական հաստատում և հիմնական համաձայնագիր

Ենթածրագրի վերջնական հաստատումից հետո (ներառյալ, անհրաժեշտության դեպքում ՀԲ-ի համաձայնությունը) Հիմնական համաձայնագիր է կնքվում Նախաձեռնող խմբի հետ, որը կանոնակարգում է ամբողջ ենթածրագրի իրականացումը:

Հիմնական համաձայնագիրը հիմնվում է ենթածրագրի վերջնական առաջարկի և փորձաքննության վերջնական հաշվետվության վրա:

Բաղադրիչ 2-ի ենթածրագրերում համայնքների ներդրումը կարգավորվում է Բաղադրիչ 1-ի միկրոծրագրերի կանոններով, սակայն այս դեպքում համայնքների ներդրման չափը մինչև 5% է: Այն դեպքերում, երբ հայտատու համայնքների խմբերը ունեն երկու կամ ավելի խիստ խոցելի կամ միջին խոցելիության համայնքներ, համայնքների խումբը կկատարի 2.5% տոկոսի ներդրում: Ներդրումը նկարագրվում է Հիմնական համաձայնագրում և կատարվում ըստ համաձայնագրի պայմանների:

25. ՍՆՏՋ Ծրագրի Բողոքների Լուծման Մեխանիզմ

Համայնքի բնակիչները իրենց բողոքներով կամ առաջարկություններով կարող են դիմել ինչպես համայնքային համակարգողին, այնպես էլ անմիջականորեն ՀՏՋՀ-ին, եթե նրանք հնարավորություն չունեն կամ չեն ցանկանում դա անել բողոքների համակարգողի միջոցով:

Տեղական մակարդակում բողոքների լուծման մեխանիզմը հետևյալն է՝

- Եթե համայնքի որևէ բնակիչ ունի բողոք կամ առաջարկություն ծրագրի վերաբերյալ, ապա տվյալ հարցով դիմում է բողոքների համայնքային համակարգողին կամ կապալառու կազմակերպության ներկայացուցչին
- Համակարգողը բողոքը լրացնում է բողոքների գրանցամատյանում
- Եթե խնդիրը հնարավոր է լինում լուծել տեղական մակարդակում, համակարգողը խնդիրը փոխանցում է համապատասխան բաժնին/մասնագետին և հետևողական է լինում խնդրի լուծմանը:
- Եթե խնդիրը հնարավոր է լինում լուծել տեղական մակարդակում, համակարգողը խնդիրը փոխանցում է համապատասխան բաժնին/մասնագետին և հետևողական է լինում խնդրի լուծմանը:

Այն դեպքում, երբ բողոքը ներկայացվում է ՀՏՋՀ-ի գրասենյակ, գործում է հետևյալ ընթացակարգը՝

- Բողոք ներկայացնողը համայնքային համակարգողի միջոցով կամ ինքնուրույն դիմում է ՀՏՋՀ-ի գրասենյակ՝ ներկայացնելով ծրագրի վերաբերյալ իր բողոքը:
- Բողոք ներկայացնողը համայնքային համակարգողի միջոցով կամ ինքնուրույն դիմում է ՀՏՋՀ-ի գրասենյակ՝ ներկայացնելով ծրագրի վերաբերյալ իր բողոքը:

- Եթե բողոքը բավարարվում է, ՀՏՋՀ-ի համապատասխան բաժինը կամ մասնագետը զբաղվում է խնդրի լուծմամբ: Բողոք ներկայացնողը այդ մասին պատշաճ կերպով իրազեկվում է:
- Եթե բողոքը մերժվում է, բողոք ներկայացնողը այդ մասին պատշաճ կերպով ծանուցվում է: Բողոք ներկայացնողն իրավունք ունի տվյալ հարցով դիմել այլ կառույցների կամ դատարան:

ՀՏՋՀ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՀՏՋՀ գրասենյակ, հասցե՝ 0037, ք. Երևան. Կ. Ուլնեցի 31
Հեռախոսահամար՝ +(374) 60 501560, (303, 305) թեժ գիծ՝ +(374) 10 24 01 59
էլ. հասցե՝ atdf@atdf.am; aram.grigoryan@atdf.am; a.shahbazyanyan@atdf.am; k.grigoryan@atdf.am
Կայք՝ www.atdf.am